## Արձանագրություն 2

**Ծովագյուղի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀ ԳՄԾՀ-ԳՀԱՇՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17 սեպտեմբերի 2019թ. ժամը 12:30-ին:

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ***

Ատոմ Սիմոնյան գլխավոր մասնագետ

***Անդամներ***

Սեդա Մինասյան համայնքի ղեկավարի օգնական

Լուսինե Թովմասյան առաջատար մասնագետ

***Գնումները համակարգող***

Արփինե Հովհաննիսյան

1. **Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերի բացումը տեղի է ունեցել ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ 24 փող., 6 նրբ., 78 շենք հասցեում՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը, ժամը 12:30-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին**

Ծովագյուղի համայնքապետարանի կողմից փաստաթղթային եղանակով կազմակերպված <<ՀՀ ԳՄԾՀ-ԳՀԱՇՁԲ-19/06>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր են ներկայացրել՝

- <<Բարեշեն Տանիք>> ՍՊԸ, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ, 1 թղմ., 2/10, shentaniq@bk.ru, հեռ. 098 88 68 96

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

<<Բարեշեն Տանիք>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են և ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

<< ՀՀ ԳՄԾՀ-ԳՀԱՇՁԲ-19/06>> ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկած գները.

| Հ/հ | Գնման ենթակա աշխատանքի անվանումը | Աշխատանքի նախահաշվային գինը | Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|---|
| | | | <<Բարեշեն Տանիք>> ՍՊԸ | | |
| | | | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գին |
| 1. | Ծովագյուղ համայնքի փողոցային լուսավորության ցանցի ընթացիկ նորոգման աշխատանքներ | 1 499 370 | 1 055 050 | - | 1 055 050 |

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

5. **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ**

Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել առաջին չափաբաժնի մասով <<Բարեշեն Տանիք>> ՍՊԸ-ին:

«ՀՀ ԳՄԾՀ-ԳՀԱՇՁԲ-19/06» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը **որոշեց**.

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

6. **Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ**

Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե <<Բարեշեն Տանիք>> ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների և <Ֆինանսական միջոցներ> որակավորման չափանիշի չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

7. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը**

«ՀՀ ԳՄԾՀ-ԳՀԱՇՁԲ-19/06» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստ հրավիրել սույն թվականի սեպտեմբերի 23-ին, ժամը 12:00-ին հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ 24 փող., 6 նրբ., 78 շենք:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Սիմոնյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Ս. Մինասյան

_____ Լ. Թովմասյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Հովհաննիսյան